

M1145

1928-N434

ՄԱՆԱՍԵՅԻՆ Վ. ՓԼՅԱՌԵՅ ԱՐՄԵՆ



891.715
5-24

~~С2~~ ~~40~~
89.71.5
л-24

ԻՆՉ ԼԱՎ ՈԳՆԵՑԻՆ



Սաթիկն ու Մանիկը շատ աշխատասեր եյին. տան բան անելիս, մայրիկին ոգնում եյին:

Մի անգամ մայրիկն ուրիշ տեղ գնաց. նա շտապով գնալիս հաց ու կարտոֆիլ տվեց յերեխաներին, պատվիրեցվոր տանից չհեռանան, մինչև ինքը կդա:

Սաթիկը յոթ տարեկան եր, Մանիկը՝ վեց: Յերբ մենակ մնացին, Սաթիկն ասաց.

— Գիտե՞ս ինչ, Մանիկ.—պարապ ինչի՞ մնանք, արի՝ տունը հավաքենք, մաքրենք, կերակուր յեփենք, վոր մայրիկը զա, ամեն բան պատրաստ լինի—հա...

Մանիկն ուրախությունից թոշկոտեց ու ճշաց —հա, հա, անենք, անենք: Վերցրեց մեծ կոթով ավելլ, բայց անզգությամբ դիպավ դարակին դրած կճուճին. կճուճն ընկավ ու փշրվեց:

— Վույ, ինչ պետք ե անենք:

— Վոչինչ, շուտ հավաքի՛ տար՝ դժւրս ածա,—ասաց մեծ քույրը, ինքն ել պղինձը զցեց պոռունկը ծռեց:

— Բան չկա, բան չկա, Սաթիկ ջան, խմոր կկպցնենք, կկոծկենք,—նրան մխիթարեց Մանիկը:

Եղ ել պլրծան, ուզեցին հատակը լվանալ, ջուրը թափեցին, ածուխը շուռ տվին, իրենք ել շաղախվեցին.



ՀԵՍԿԱՎ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՀ ԲԻBLIOTECԱ
ՀԱՅՈՒ-ԱՐՄ. ՀՀՊ
Ա. Խ. Ա. Խ. Ա. Խ.

56951-66

Եղ ինչ ե, աղջի, —ասաց Սաթիկը, —թշիկ ածուխ
ես քու:

— Բա դու եղ ինչ հալի յես, քիթդ ու ճակատդ սե-
փացրիլ ես, —ծիծաղեց Մանիկը:

— Վոչինչ, հետո կլվացվենք, արի՝ դեռ գործ անենք.

— Գիտե՞ս ինչ, Սաթիկ, իրիկունը մայրիկը լվացք ա-
րավ, դեռ տաշտակումն ե, արի մզենք, տանենք դուրս թո-
կի վրա փռենք: Ինչ լավ կլինի ե, մայրիկը կդա, կտեսնի
լվացքը շորացած:

— Դե, արի:

Սկսեցին յերկուսով շորերը մզել, իրենց բոլոր շորերն
ու հատակը թաց արին ու տարան փռեցին: Հենց վոր
բոլոր շորերը փռեցին, մին ել — «չըլրամփ» — թոկը կտրվեց
ու շորերը թափփնցին հողի մեջ:

— Վայ, վայ, ես ինչ ելավ, — ճշոցին յերեխաները:

Դե, Սաթիկ, ինչ ես կանգնել, արի տանենք նորից լը-
վանանք, — ասաց Մանիկը, աշքերը լայն բանալով:

— Զե, չե, Մանիկ ջան — կերակուրը մնաց, դու շորե-
րը հավաքիր, տաշտակն ածա, թող մնա մինչև մայրիկի
զալը, յես գնամ, վառարանը վառեմ, վոր կերակուր յե-
փենք:

Մանիկն սկսեց շորերը հավաքել, իսկ Սաթիկը գնաց
վառարանը վառեց, մայրիկի պատրաստած թանը դրեց վր-
ան, բայց վառարանը չեր վառվում, ծուխ եր անում:

Խեղճ Սաթիկը ծխումը կուրացավ. Մանիկն ել վրա
հասավ, նա ել սկսեց արցունք թափել ծխից. Փշեցին, փը-
շեցին, բայց չեր վառվում: Հանկարծ դիմի ընկան, վոր ձը-



Խի խողովակը փակ ե. բայ արին ու վառարանը վառվեց,
ծուխը քաշվեց:

Սաթիկը գնաց՝ հավերին ջուր տա. Մանիկը հիշեց, վոր
մայրիկը կերակուր յեփելիս, աղ ե զցում. վերցրեց մի
մեծ բուռ աղ զցեց ու խառնեց:

Սաթիկը ներս մտավ ու ուզեց համբ տեսնել:
Վա, ես ի՞նչ ե. եսքան ել աղի՞:

- Ախար նոր աղ զցեցի՞:
- Բա յես ել եյի զցել — ես ի՞նչ ես արել:
- Լավ, լավ, վոչինչ, սպասը մենք կուտենք, արի մայ-
րիկի համար սամավար զցենք:
- Հա, հա, մայրիկը թեյ շատ ե սիրում, արի սամա-
վար զցենք:

Սամավարը մոտեցրին վառարանին, ու կիսավառ փայ-
տերն ունելիքով լցրին մեջը: Կրակն իսկույն բռնկվեց:

Հենց այդ ժամանակ ներս մտավ սայրիկը, իսկույն
հասկացավ — ձայնից — վոր սամավարը դատարկ է:

- Զուր լցրել եք, — աղաղակեց նա. ձայն հանող չե-
ղավ:

Լավ եր, վոր մայրիկը ժամանակին հասավ ու ազատեց
սամավարն այրվելուց:



NL0392336

4028


ԱՀՀ

ամ 1
ամ 1

ՆՈՐ ՀՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Գիրք

1. Հ. Թումանյան—Շունն ու կատուն պատկերազարդ 50 կ.
2. Վիքարի Բիանկի, —Առաջին վորսը. պատկերազարդ, փոխադրություն Աթ. Խնկոյան 50 կ.
3. Խնկո Ապեր, —Մեծն Հոկտեմբեր, պատկերազարդ 37 կ.
4. Խնկո Ապեր, —(Հայ Ազնիվցեվի) Մի զավթ թեյ 60 կ.



չ. 604

Գրառեալ. № 260 ր. Տիրաժ 3000. Վիմագր. Հայպոլիկ. պատ. 4000.